Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Աստուածկառոյց մեր հոգեւոր կենտրոնից գոհունակ սրտով Հայրապետական օրհնութիւն ենք բերում եւ գնահատանքի Մեր խօսքը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Աւելի քան յիսուն տարիներ Դուք Ձեր ջանքերն ու նուիրումն էք բերում Հայոց պատմութեան տարբեր հարցերի լուսաբանմանը եւ նպաստում, որ մեր ժողովրդի հոգում արթուն լինեն անցեալի յիշատակներն ու արժէքները: Ձեր բազմաթիւ ուսումնասիրութիւններն ու յօդուածները, կազմած դասագրքերը, միջազգային գիտաժողովներում Ձեր զեկուցումները կարեւոր աւանդ են հայրենի պատմագիտութեանը եւ ճանաչում են բերել Ձեզ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս:

Մեծ է եւ գովարժան Ձեր վաստակը երիտասարդ սերնդի կրթութեան գործում: Երկար տարիներ դասաւանդելով Երեւանի Պետական Համալսարանում եւ բարձրագոյն այլ կրթօջախներում՝ Դուք փոխանցում էք Ձեր ուսանողներին ոչ միայն գիտելիք, այլեւ՝ Ձեր հոգու սէրը մեր Հայրենիքի ու ժողովրդի հանդէպ, Ձեր նուիրումը պատմական գիտութեանը: Գնահատելի են Ձեր ծառայութիւնները նաեւ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում՝ պաշտօնավարելով որպէս փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար, հայոց պատմութեան եւ հասարակական գիտութիւնների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Դուք հաւատաւոր հոգով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական սիրով Ձեր մեծ ու ազնիւ ներդրումն էք բերում մեր եկեղեցական կեանքում՝ որպէս Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ մատուցելով Ձեր ծառայութիւնները ի յաւէտ պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւններն ու վաստակը հայագիտութեան ու կրթութեան բնագաւառներում, Ձեր անմնացորդ սէրն ու նուիրումը մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Աստուած Իր շնորհի եւ օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչանքով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը գիտութեանը, մեր Հայրենիքին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Յունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սուրբ Էջմիածնի
ընդ համարաւ 407